



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

L6n
1584

1999

ԾԻՐԱԿԵՑԻ

Մ Ա Ր Օ

ՊԱՏԿԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Բ.

ԱՐԵՔՈՈՒՅԹԻՈՒՅՈՒՆ

ՏՊՈՒԹՅ ԳԱՅՐԻ Ա. ՍԱՀԱՅԱՆՑԻ


1892



ՀԱՐԱԿԵՑ

Ս Ա Ռ Օ

ՑԻՎԻԼԻ ԿԱՂԱՔ ԳԻՒԹԻՎ



Բ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ Ազգային
Գրադարան

1892

Ի Ւ Թ Ի Ր Ե Լ Ի Ե Վ Բ Ո Ր,

Ա Տ Ե Փ Ա Ն Ն Ո Ս Ե Խ Ա Յ Ա Բ Բ Ո Ւ Ի Ր Ե Ա Ն Ի

ա ն մ ո ո ս ց յ ի շ ա տ ա կ ի ն

Խ Ո Ր Ի Ն Ե Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Ն Ո Ւ Կ Ի Ր Ո Ւ Խ Ե

Ճ Ի Ր Ա Կ Ե Ց Ի Ն .

Дозволено цензурою. Тифлисъ, 27 Июля 1915 года.

25 1590

41584-60

Типографія К. С. Саноянца, въ Александрополь,
Бебутовская ул., соб. д.

ԱՐԵՎԵԼԻ ԵՂԲԱՑՐ ԻՄ ՍՑԵՓԱՆՆՈՍ!

Նախախնամութիւնը մեզ որբ էր թողել բայց գու
մեզ վերայ ունէիր հայրական գութ ու գորով։ Դու ինքդ է
կարօտ էիր հայրական իննամբի, բայց քո անուշը բնաւորու-
թեամբ մեզ հօր պէս իննամում էիր։ Մինչդեռ օտար երի-
տասարդները զբօսանքի ու վայելչութեան մերայ էին մոտա-
ծում, գու միշտ մեր հացի և ուսման հոգմն էիր քաշում։
մինչդեռ օտապների տանը կուր, յիշոց ու բանիբասանք էր,
մեր տանը գու սովորեցնում էիր Ա. Աւետարանի հետ
Աւերայրի դաշտի նահատակների սքանչելի պատմութիւնը-
և դշեւն.

Հոգով շափ ցաւում եմ, որ մենք բաղդ չունեցանք
վայելելու քո ելքայական անուշ սերը և քաղաք գորով։
շատ շուտով կնքեցիր քո ծաղիկ կեանքը։

Հրատարակելով այս փոքրիկ աշխատութիւնը, որբազն պաշտք համարեցի նույնական քո անմահ յիշատակին և թող օրհնեալ լինի բու բարի անունը, որ մեզ համար շատ քաղցր է և նպիրական.

ով ակնութեա և Արքայի Սև պատճեա ուշաւուաց ամբողջը
ու Ու առ Ու պատճեա և ուս զախար մաս պատճեա
պատճեա Ու Ա

G. *agriculture* *language* *industry* *population*

U.

Տուն և ընտանիք մի փաքրիկ թագաւորութեան երկիր ու սահման է, որը նահապետական աթոռի վերայ ինստիլն ձնողք, հայրն իբրև թագաւոր և մայրն իբրև թագուհի և կրկառափարեն հպատակ ընտանիքը. սոյն թագաւորութեան մէջ ոչ սոսիկան կայ, ոչ սուր, ոչ ընդուռ-թիւն, ոչ գաւազն, այլ ամեն. և տեղ հայրական սէր և մայրական գորովին է, գաստիքակ և խրատ ծննդաց կինդամի օրին կն է.

Digitized by srujanika@gmail.com

Արշարունեաց երկրի Երասման գաւառի Նախիջևան
գիւղում գտնվում էր Նահբազեանց Աղամի տունը: Սյունը տունը գտնազանվում էր միւս գիւղական աներից նրանով, որ շնչված էր կոկ, կանոնաւոր վարպետի ձեռքով: ունէր չորս պատուհան, մի գալապաց: Տունը համեմատելով դրացիների տների հետ, գեղեցիկ էր, մանաւանի ոլուանը կային քանի չափ բարդի ծառեր: Տանուելը, Նահպազեանց Աղամը, յայտնի էր ամբողջ Արշարունիքում որպէս առաքինի մարդ, որպէս ժիր, աշխատասեր գիւղացի, որպէս հաւատարիմ անձն: Նատ անդամ գիւղացիք իրանց վէճերը և գանգատները Աղամի մօսն էին վերջացնում:

Թիւքքաց տիրապետութեան ժամանսակ Ադամը Նախի-
ջեան գիւղի տանուտէրն էր, կամ ինչպէս ժողովուրդն առ-
սում է «բաշ-մուխտարն» էր: Տանուտէր Ադամը իր երկրա-

գործական պարապմունքների մէջ խելացի և հաշվագետ էր։
Նա ունէր քսան օրավար հող, մի ջրաղաց, 20 կով 10 եզ
և 50 ոչխար։

Կանուխ ամուսնացած լինելով Ադամը ունեցել էր 12
զաւտկ, սակայն այդ 12-ից միայն չորս էին կենդանի, երկու
մարդու գնացած դստերք, երկու որդիք՝ Միսակը ու Սեդ-
րակը։

Տնտեսական կառավարութեան մէջ Ադամի ամենաժիր
օգնականն էր իր սիրելի ամուսին Եղիսաբէթը։ Տիկին Եղի-
սաբէթը 40 տարեկան առողջ կազմվածքով խելացի կին էր։
Նա ամբողջ օրը ոտքի վերայ աշխատութեան մէջ էր։ Առա-
ւօտ կանուխ վեր էր կենում, ալիւրը մաղում, խմորը շաղ-
վում, թինիրը վառում, կերակուր եփում, հացը թիսում,
տղոցը լողացնում, հոտաղ-մշակ կերակրում, կով-կթանի
հոգոր հոգում և սկսում էր «Ճայրա» (Ճախարակ) մանել։ Ա-
դամի տան հագուստը բոլորը Եղիսաբէթի մանած-գործածն
էր։

Իր ոչխարների բուրթից նու թել էր մանում, թելը ինքն
էր ներկում, շալ գործում. այդ շալից նա պատրաստում էր
բոլորի համար հագուստ, իսկ բամբակից գործում էր կտաւ
շապիք-վարտիքի համար։

Մինչ գեռ Ադամի դրացիները ճորտ էին դառել «բա-
զազ» կոչված վաշխառու պարապիտներին և տքում էին
նրանց հրեշտակ տոկոսների տակ և որոնց բարբարոս վեր-
սիլներից աղատվելու, ոչ խելք ունեին և ոչ հնար, ինքը
տանուտէր Ադամը աղատ էր պարտքից. նա բազազի դուք-
նի դռնից անցնելուս անվախ և ազատ էր, նա չունէր վեր-
սիլներ, չունէր պարտք, չունէր վախենալու տեղիք։
Նրան վող հարկաւոր էր միայն արքունի հարկերը տա-

լու և մի քանի տնային այլ և այլ ծախսեր անելու։ Նա ին-
ըլ բացի երկրագործ լինելուց՝ արհեստաւոր էր, վարպետ
հիւսն էր և արհեստի շնորհիւ նա յարդ ու պատիւ ունէր.
ունէր նաև վոքրիկ դրամագլուխ իր տան կառավարութեան
համար։ Ադամը գոհ էր իւր վեճակից։

Նրա որդիքը Միսակն ու Սեդրակը գիր կարգալ էին
սովորում զիւղի քահանայ Տէր-Թագոսի մօտ. քահանան շատ
սիրում էր այդ տղոցը, մանաւանդ Միդրակին, որը Նարեկի
գլուխները ջոխ պէս էր կարդում։
Այդպէս անցաւ նրա 45 տարին և ամուսնութեան 25-
ամեակը։

Բ.

«Մարդ գիտէ իր տալեքը, բայց չգիտէ գոհ-
ի գալեքը»

Ա. Ռ. Պ. Պ. ծ.

1881 թ. Յունվարի 1-ն էր։ Այդ օրը ժողովուրդը
տօնում էր նոր տարին, բարեմախթութիւններ ասում էին
ու լսում։ Շատերի համար այդ օրը բեֆի, ուրախութեան
օր էր. բայց մեր տանուտէր Ադամի համար այդ օրը մի սև
օր էր։

Նրա հաւատարիմ ամուսինը-Եղիսաբէթը-ծանր կեր-
պով հիւսնդ էր. այդ օրը նրա հիւսնդութեան եօթներորդ
օրն էր։ Հիւանդի անկողնի մօտ տիսուր արտում նսաած էր
ինքը տանուտէր Ադամը, իր դստերց և որդոց հետ։ Հիւան-
դը տառապում էր տիֆ աղբով։

Ոչ մի ժողովրդական հնար չմնաց որ ՚ի գործ չգնեին։
Աղօթող Աննան տանին անգամ աղօթեց, «ե-
զանկներին նայեց», Տէր-Թագորսը բանի քանի անգամ Նարեկը

Ճայրէ Ճայրկարդաց, «գիր», գրեց, իր բոլոր խելքն ու գիւտութիւնը գործ գրեց, սակայն չ'եղաւ: Ոչ մի հնար չ'օգնեց, միայն զուր տեղը խեղճ Եղիսաբէթին նեղացրին, չարշարեցրին, վշտացրին: Նա ալդէն մաքրել էր իր հաշեւը այս փշալի ու տատասկոտ աշխարհից: Նա յաւիտենականութեան մէջն էր:

Խորին տիրութեամբ տանուտէր Աղամը հետեւում էր յուղարկաւորութեանը: Նա ուշաթափվեցաւ, երբ իր լծակցին իջեցրին հողը և հողով ծածկեցին նորա մարմինը:

Աղամը եկաւ տուն, արտասվալի աչքերով գրկեց համբուրեց իր երկու որդոցը, որոնք այդ օրից որբ մնացին, «ուրէ ձեր մայրը... այս իմ աչքերի լոյս, դուք որբ մնացիք, ձեզ այդ էր վիճակված» լալս էր Աղամը: Նա սիրող սիրտ ունէր, նա զգայուն էր:

Այդ օրը բոլոր գիւղացիք տանուտէրի տունը եկան: Եկաւ նաև քահանան, «Հոգւոց» ասելով բազմեցաւ սեղանի գումիւր Աղամը չորս եղ էր մորթել իր կնոջը «Հոգու հաց», այսինքն քելեխ էր տալիս: Բոլոր գիւղացիք մեծով պլատիկով կերան կշտացան, լիացան, վեր կացան:

—Աստուած հոգին ընսաւորէ, Աղամ բեհա, նրա հողովքեղ ու որդոցդ արեշատութիւն տայ, բարով տեսնես տղցդ «ալն ու եշիլը», բարով մոռանաս այս ցաւը, դու ողջ լինիս: Այսպիսի բարեմախթութիւններով գիւղացիք ցրվեցան իրանց աները:

Պ.

Այդ տիսուր օրից անցել էր 5 տարի: Միսակն ու Սեղբակը աճել զօրացել էին և երկրագործական պարամունքների

մէջ իրանց հօր թեւ ու թիկունք և լաւ օգնականներն էին: Միսակը արդէն 21 տարեկան էր: Տանուտէր Աղամը աչքը «չորս էր արել» մի լաւ աղջիկ էր պարում իր անդրանիկ որդուազիկ Միսակի համար: Նա մի օր կանչեց իր մեծ գսաեր Գոհարին՝ ասելով:

—Գոհար ջան, Միսակը հասել է, կառք Աստուածոյ, լաւ չնորհալի տղայ է եղել: մի լաւ աղջիկ չ'կայ գիւղում առնենք, հարստնիք անենք, մի քիչ սրտերս ու բախսացնենք, որդի, ես էլ եսօր կամ էզաց չ'կամ, մեր տան էլ մի տէր բերնիք, տունը առանց կնոջ տուն չ'է:

—Ինչու չ'է, հայրիկ, դու այդպէս բան Գոհարիդ հրամայէ, նա այդ դէպ բում ինչին չ'է, ես պատրաստ եմ:

Հայր ու աղջիկ ամբողջ ժամերով նստած խօսում էին գիւղի այդ ժամանակվայ հասած աղջիկների մասին: մէկին լաւ էին ասում, միւսին վատ, մէկին հայրն էր հաւանում, միւսին աղջիկն էր գովում: ոմանց ծնողները իրանց ասածի պէս չ'էն, ոմանց ծնողքը լաւ էին, իրանք վատ էին: Վերջապէս եկան այն եղբակացութեանը, որ վաղը պատգամաւոր զրկին Մազմանենց Փիլօյի ալջկան Փեփրոնին ուղելու:

Հետեւեալ օրը աանուտէրի պատգամաւորը գիւղական սովորութեան համեմատ զնաց Մազմանենց Փիլօի տունը: Փիլօն պատգամաւորի մէկ խօսքը երկու չարեց:

—Աղամ քէհան ինձանից մէկ աղջիկ է ուզում, երկուսն էլ որ տղէր, չէի նազ անի: նէն մնայ օձախը, ինքը լաւ, տղան լաւ, տունը լաւ, ինչու չեմ տալ, Ախմօն ջան, խօսք խօսք է, տվի որ տվի: այս ասելով Փիլօն Սիմօնին արալ հրաւիրեց, որից ետայ սարգեցին մի փոքրիկ ընթրիք նահապետական ձեռք: Այդ օրը Ս. Սարգսի շաբաթ օրն էր: Հետեւեալ օրը ինքը տանուտէր Աղամը, Տէր-Թաթոսը, քաւոր

Խաչօն, և մի քանի այլ պատվաւոր գիւղացիք կատարեցին Միասկի նշանադրութիւնը և տասն օրից յետոյ հարսաւնիքը:

Պ.

1887թ. Նոյեմբեր ամիսն էր. աշնան տիսուր օրերից մէկը: Տանուտէր Ադամի տունը նմանում էր հիւանդանոցի: Կար Ադամը պարկած էր ախֆ աղտով. հիւանդ էր նրա որդի Սեղրակը, հարսը Փեփրոնէն և մինչեւ անգամ Միասկի որդին-նորածին Արամը: Ուրքի վրայ էր միայն Միասկը:

Կէս գիշեր էր:

Հիւանդի մօտ վառվում էր փաքրիկ թիթեղեայ լամպը: Հիւանդի մօտ կանգած էր Տէր-Թաթոսը և կարգում էր նարեկի Զ. զլուխը և ամեն աւարտման կարգում էր բժշկութեան Աւետարանները: Աենեակի մէջ ախրում էր գերեզմանական լուսակը:

— Միասկ, ձայն տվեց հիւանդը. — Ո՞ւր է Սեղրակը. Սեղրակը նոյնպէս հիւանդ էր, բայց լսելով հօր ձայնը, վեր թռաւ, հագաւ: «Նս այստեղ եմ, հայրիկ, ի՞նչ կ'հրամայես:

— Ապրիս, որդի, գէհ, երկուսդ էլ ինձ մօտ եկէք:

Սեղրակն ու Միասկը չոգան հօր առջեւ: Հայրը նատեց անկողնի մէջ: Քահանան գեռ լուելեան կարգում էր նարեկը:

— Տէր հայր, գու մի քիչ հանգստացիր, ես մի երկու խօսք ունիմ ասելու, ասաց հիւանդը: Քահանան ընդհատեց:

— «Տղաք, գարձաւ գէպի Միասկը ու Սեղրակը, ես ահա 50—55 տարեկան եմ, բայց այսպէս խիստ ցաւ դեռ չէի տեսել: Իմ օրը, փառք Աստուծոյ, անցուցի գո՞յ, սակայն

մայրիկից յետոյ կարծես չեմ կարող ցաւի դիմանալ:

«Ձեզ բոլորիդ յատնի է, որ ես իմ կառավարութեան միջոցն ծուլութիւն տած բանը չ'գիտէի, անդադար աշխատել ջանը անել — այս իմ նշանաբանն էր:

«Դուք գիտէք որ ես ձեզ ոչ մի բանից չեմ զրկել: Մեր տունը Աստուծոյ ողբուժութեամբ լի էր ամեն բարութիւններով: Ոչ մի բանի նեղութիւն չ'ունէինք: Մեր առօրեայ գործը ամեն ինչ կարգին, ամեն ինչ օրինաւոր էր, սակայն ի՞նչ կայ աշխարհում անփոխիս: Ամեն ինչ անցաւոր, ամեն ինչ ունայն է, ասել են մեծ մարդիք. ամեն ինչ ունայն է:

«Այս ցաւը, որ ինձ փաթաթվել է, ես ինձ այնպէս եմ զգում թէ մահս ցաւն է: Նատ անգամ հիւանդացել եմ, բայց ոչ մի անգամ այսպէս խիստ չեմ տանջվել: Եթէ առողջացայ-այդ լաւ. իսկ եթէ մահացայ (միք վախենալ, մենք ամենքս մահկանացու ենք միայն մեր հոգին անմահ է) կաղաչեմ ձեզ որդիք, 'ի սէր Աստուծոյ, 'ի սէր այս սուրբ օճախին, որ մեզ 50—55 տարի կերակրում է, 'ի սէր պաշտելի մայրիկներուդ գերեզմանին, տպրեցէք իրար հետ սիրով, ասլրեցէք միասն հաշտ, խաղաղ ու ուրախ:

«Նս իմ տեղ ձեզ վրայ մեծ կամ հայր կ'ընշանակեմ իմ սիրելի եղբօս Ստեփանին, հնազանդ եղէք նրա բարի խորհուրդներին, լսեցէք նրա խրատը, նա օտար չէ, ձեր հղուացըն է, ձեր բարի կամեցողը:

«Նս իմ բազդից չնորհակալ եմ: Իմ կեանքը, փառք Աստուծոյ լաւ անցաւ. Աստուծ ինձ տվեց 12 զաւակ, այդ 12-ից մնացել էք չորսդ: Քոյլերիդ «հաւ արել թառը դիմ» *):

*) Հաւ արել-ժող, լեզվով նշանակում է մեծացրել:

«Միասկ ջան՝ քու մեղքիդ տալից էլ ելած եմ, գու այժմ քո բաղդիդ տէրն ես, ապրիս, որդի, բաղդիդ հետ ՚ի միասին ծերանաբ, սակայն Աեղբակին մնացի պարտաւոր:

«Քեզ Աստուծոյ, Աեղբակս քեզ եմ յանձնում, Միասկ ջան, պահէ պահանէ. այժմ նրան գու համ հայր ես, համ եղբայր. գու գիտես, գուն ու քո Աստուծը, Աեղբակիս լաւ մուլտմիցիր: Աեղբակը դեռ ջահէլ է, նրա «Չուրք զէպի վեր է», խնամքի ու խրատի կարօտ է:

«Զինի թէ դատարկ բանի համար կռվիք, քանդէք այս սուրբ օձախը որը 50 տարի է մեզ կերտակում է. չլինի թէ իմ հոգիս գերեզմանիս մէջը զայրացնէք, իմ տանջանքը աւելացնէք:

«Զինի թէ ձեր արարմունքով թշնամին ուրախացնէք և բարեկամը արտմեցնէք. կաղաչեմ ձեզ, իմ աշքերի լոյս, իմ հոգու հատորներ, ապրեցէք իրար հետ հաշտ, խաղաղ, սիրով և կարելցութեամբ:

«Գու, Աեղբակ, պէտքէ եղբօրդ հնազանդիս, որդիական խոնարհութիւն ունենաս, նրա խօսքից հրամանից չեխես, բանի գործի մէջ չծուլանաս, աշխատասէր լինիս. իսկ գու, Միասկ, պարտես հայրական գութ ու զու ով ունենալ, նրա սխաները ներես, պահես, մեծացնես և յետոյ իր մուրագին հասցնես, իր թագին ու արտակին արքանացնես:

«Դէ՛ս ասացէք, կ'կատարէ՞ք իմ այս պատվէրները»:

Որդիքը, որ մինչեւ այդ փարկեսն լուռ սովասում էին, այլ ես չգիմայան, լոցին ու փաթաթմիցան հօր պարտնոցը և դառն կերպով լայիս էին:

«Բաւական է, բաւական է, հրամայեց հայրը. լացը նշանակութիւն չունի, ես ձեզ ասացի որ մարդիկ ամենքն էլ մահանացու են. ծնուել ենք մահանալու համար. — ես ձեր լա-

ցը այն ժամանակ անկեղծ կ'համարեմ, երբ կը տեսնեմ որ իրօք գուք իմ տունը կ'պահէք իր զիրքի և պատվի մէջ, կապրիք խաղաղ հաշտ և ուրախ, դէ՛հ, ասացէք, կը կակտարիք իմ պատվէրները»:

Որդիքը այս անգամ էլ չպատասխանեցին, նրանց պատասխանը լայն ու հեկեկան էր, նրանք աղեղողորմ կերպով լաց էին լինում: Հայրը երրորդ անգամ հարցրեց:

— «Տղաք, թողէք լացը լայսու պարտականութիւնը կանանց գասին է յատուկ, գուք աղամարդ էք, գուք պէտք է գուռ բաց պահէք, հօր անուն չկորցնէք, պէտք է կատարէք իմ ասածները»:

— Ամենայն սրբութեամբ, հայրիկ, քո պատվէրները Աստուծոյ պատգամի պէս կ'պահէնք: Դու անհոգ կաց, հայրիկ, կաշխատենք քո հրամանից մի մազի շափ գուրս չ'գալ:

— «Դէ՛ս զօրանաբ, որդիք: Աստուծոյ անհատնելի հացը ուտեէք, Հայր Աբրահամի օրհնէնքը ձեր վրայ լինի. Խաչակի պէս բազմանաբ, ծլիք ու ծաղկիք, այժմ ես հանգիտակ'մեռնեմ, հանգիտ բաց ճակատ կ'ներկայանամ Աստուծոյ ահեղ առենին, յոյս ունիմ, որ իմ ծէրը ինձ չե կորցնի, մեծ է Աստուծոյ ողորմութիւնը: Դէ՛ս, մօտ արիք. եկէք իմ վերջին համբոյրը տամ Ձեզ»:

Տղաքը մօտեցան, համբուրեցին հօր ձեռքը, իսկ հայրը նրանց ճակատը ու այտերը...

Այս վերջին համբոյրն էր, որ հայրը տալիս էր իր որդոց: Արտասուրը աղբեկրի պէս թափում էր որդոց աշերից, իսկ հայրը չէր կարող լալ: Լալու ընդունակութիւնը ցամաքել էր: Նա օրհնեց իւր որդոցը, նայեց դէպի երկինք «Տէր ընկալ զհոգի իմ» տաց ու լրեց:

Այդ տխուր օրից երկու օր յետոյ ժամկոչ Պուկասը

փորում էր Տ. Եղիսաբեթի մահարձանի մօտ մի նոր գեղեղը
ման... բոլոր Նախկինութեանի հասարակութիւն մասնակցումներ
իրանց սիրելի տանուտէրի յուղարկաւորութեանը: Նրան թա-
ղեցին իր սիրելի ամուսնու մօտ: Գիւղացիք մինչեւ այսօր
օրհնում են տանուտէր Ադամի բարի յիշատակը:

❖.

Հանգուցեալ Աղամը իր դրացիներից ամենից շատյա-
րաբերութիւն ունէր Ասկանեայ Աշոտի հետ: Աշոտը թէն
ազգական չէր, բայց ազգականից աւելի սէրու համարում
ունէր տանուտէր Ադամի մօտ: Նա լաւ դրացի էր և ազնիւ
օդնական:

Աշոտը բացի երկրագործութիւնից գիտէր նաև որմաս-
դիրի արհեստը: Գիւղի բոլոր կանոնաւոր տները Աշոտի շին-
վածն էր. այդ պատճառով գիւղացիք նրան կոչում էին
ուստայ Աշոտ:

Աշոտի ընտանիքը մեծ չէր, ինքը, իր կին Կատարինէն
և մի հրեշտականման աղջեկ-Մարիամը, կամ ինչպէս իրանք
կոչում էին Մարօն:

Մարօն գեղեցիկ էր բառի բուն նշանակութեամբ. նա
թէն 15 տարեկան էր, բայց նայողը այնպէս կ'մտածեր թէ
20 տարեկան է: Մարօն էր բարձր հասակով, առողջ, ա-
մուր կազմվածքով, ունէր շականակագոյն երկար մազեր, լայն
սպիտակ ձնկատ, կամար ուներտով, կապոյդ աշերով, կարմիր
լիք այտերը կըր բուխաղով, լիք կրծքով: Մէկ խօսքով Մա-
րօն անպատմելի գեղեցիկ էր և շնորհալի: Քաղցր ժպիտը
երբէք չէր հեռանայ նրա բարի գէմքից: Մարօն իր ծնողաց
ուրախութիւնն ու միթարութիւնն էր, ինչքան հայրը

տիտուր լինէր, բաւական էր տուն գալ նայէր Մարօյի շնոր-
հալի գէմքին, կարծես իսկոյն փարատվում էր նրա տիրու-
թիւնը, զնում էր նրա հոգսը: Մարօն իր ծնողաց թէ որ-
դին էր թէ աղջիկը: Հօրը սիրելին, մօրը ժիր օգնականը:

Մարօյի գեղեցկութեան համբաւը շատ շուտ տարածվե-
ցաւ ամեն տեղ: Ամեն ազատ տղայ ունեցող մայր փափա-
զում էր Մարօյին աւնել իր տղին: Այդ պատճառով Աշոտի
տանը գալիս էին բազմաթիւ խնամախօսներ:

Թէւ մեր ոստայ Աշոտը հարուստ մարդ չէր, բայց
այնպէս հարուստ տեղերից էին գալիս Մարօյին ուղելու, որ
ինքը Աշոտն էլ զարմանում էր: Սյդ կռապաշտ հարուստ-
ները, որ քանի տարի առաջ Աշոտին մարդու տեղ չէին զնում,
նշաւոր չէին հաշվում, այժմ փալարշական խօսքերով բա-
րեւում էին, մեծարում էին. զայֆա, արագ էին համեցէք
անում, հրաւիրում և ուղում էին Աշոտի հետ բարեկամա-
նալ:

Ուստայ Աշոտը լաւ գիտէր որ այդ մեծարանը, զայ-
ֆան ու արագը իր պատվին չեն տալիս, այլ 'ի սէր Մարօյի,
այդ պատճառով միշտ բաշխում էր, շնորհակալութիւն էր
յայտնում:

Բացի իրանց գիւղեց Մարօյի հոչակը հասել էր մին-
չեւ Կաղզվան, մինչեւ Նէօրակեալ նատ շատերը լսել էին Մա-
րօյի սքանչելի պատկերը և ուղարկում էին առատ «բաշլուց»
տայու Մարօն իրանց հարս անել:

Նթէ մի ուրիշը լինէ, Աշոտի տեղը կ'նայէր ով լաւ
«բաշլուց» կտայ նրան կտար Մարօյին. բայց տես որ ուստայ
Աշոտը զգայուն մարդ էր, նա կարդացող էր և գիտէր զա-
նազաննել սէրը ժանդ մետաղից և բոլոր պատգամաւորներին
նա պատասխանում էր այսպէս:

—Աղջիկս դեռ փոքր է. կաղացեմ, թողէք Զեր մտադրութիւնը մինչև եկող տարի: Բայց լնքը աչքի տակով զննում էր բոլոր ակապ տղոցը: Նա նշանակութիւն չէր տալիս իր ապագայ խնամու ոչ փողին, ոչ մի կայքին, ոչ հողերին և ոչ անասուններին, այդ բոլորը մի կոպէկ չաժէր Աշոտի աչքին: Նա որոնում էր այնպիսի փեսացու, որ լինէր խելացի, աշխատասէր և առողջ և այդ բոլոր յատէութիւնները նա տեսնում էր իր հանգուցեալ բարեկամ տանուաէր Ադամի որդու Սեդրակի մէջ: Եւ իրօք, Սեդրակ Շահմագեանը այդ ժամանակ գիւղի ամենալաւ տղաներից առաջինն էր: Բնութեամբ խելացի, տեսքով սիրուն, կազմվածքով առողջ և գործի մէջ ժիր աշխատասէր էր, բարեբազգաբար Մարոյի սիրան էլ հէնց խակ Սեդրակի վերայ էր: Մարոյի համար Սեդրակը մի ամբողջ աշխարհը արժէր:

Փոքր ժամանակից ընտելացած լինելով, Սեդրակն ու Մարօն գիտէին իրարու բնաւորութիւնը, նրանք շատ անգամ միասին արտօր հաց էին տանում, գառ արածացնում այժմ մեծանալով թէկ հեռու էին, տեղական սովորութեան համեմատ չէին իրար հետ խօսում, բայց նախկին սէրը կարծես կապում էր այդ երկու մատաղ սրտերը միասին: Երբ Աշոտի տանը խօսք էր լինում, թէ ում տան Մարոյին, ուստայ Աշոտը ասում էր.—Ես իմ Մարոյին կ'ատմ Շահմագենց Սեդրակին, ուրիշ ոչ ոքի:

Պէտք է ասել որ Սեդրակն էլ իր կողմից վասվում էր Մարոյի համար, բայց չէր վստահանում իր այդ սէրը յայտնել: Եւ ում կարող էր յայտնել խեղձը... մայր չունեցողի գործը գժվար է այդպիսի դէպքում:

Մի երեկոյ Սեդրակի մեծ քոյր Գոհարը եկել էր հարանց, այդ օրը Միսակի կին Փեղլոնէն հիւանդ էր. այդ

պատճառով Գոհարը այդ գիշեր մնաց հարանց տուն: Գոյրը հետաքրէիր եղաւ ու լսեց, թէ ինչպէս Սեդրակը քնի մէջ յիշում էր գեղեցիկ Մարոյին. սիրոյ խօսքերի, սիրոյ զգաց-մունքների մէջ կանայք առհասարակ խորամանկ են: Գոհարը կանուխ զարթնեց, ձայն տվեց Սեդրակին, ասելով.—

—Սեդրակ ջան, մի լաւ երազ տեսայ:

—Խէր ընի, ինչ երազ տեսար:

—Խէր է իշալլահ (յոյս Աստուած), Աեգօ ջան, երազում բեզ նշանել էինք Աշոտի աղջկայ Մարոյի հետ, հարսանիք էինք կատարում:

—Հարսանիք, այդ լաւ երազ է, Գոհար ջան, երևի կըռ-նակդ բաց ես քնել:

—Չէ, քու արև, այնպէս սիրուն հարս էր դառել Մարոն, որ սաղ գիւղացիք բերանները բաց մնացին:

—Երևի մինչև հիմայ էլ գեռ բաց է, ասաց Սեդրակը ծիծալելով.—լաւ, հարսնետնից ես գալիս, հապա ուրի է, ինձ «տառօսի մազա» *) չես բերել:

—Բերել եմ, դրուստ բերել եմ, Աեգօ ջան, դու այն ասա, հաւանում ես Մարոյին:

—Ինչ կայ հաւանելու կամ չհաւանելու. Աստուած տիրոջը բաշխի:

—Հապա ես որ գնամ Մարոյին բեզ համար ուզեմ; դու ինձանից շնորհակալ չես լինի:

—Դու որ այդքան բարի լինիս, ես ինչ պէտք է ասեմ, ասաց Սեդրակը ամաչելով: Այս խօսակցութեան վերայ ներս մտաւ Միսակը. քոյր ու եղբայր լոեցին:

—Սեդօ, հրամայեց Միսակը. զնա մշակներին ձայն տուր,

*) Տառօսի մազա ասում է այն քաղցր ընծան, որ հարսնանեց տանում են ազապ տղոց կամ աղջկնեցին:

դութանի լաւ վաղմն է, կանուխ ենենք, քանի հով է գործ տեսնենք:

Սեղբակը իսկոյն հազար տրեխները և դուքս գնաց:

Սեղբակի գնալուց յետոյ Գոհարը դարձաւ դեպի Միւսակին:

—Միսօ ջան, գիշերս մի բան միտքս ընկաւ. Աեդն եկել հասել է. նշանելու լաւ ժամանակն է, չնշանե՞նք:

—Խոչու չնշանենք, ասաց Միսակը. լաւ, հազար գիւղում մի լաւ աղջիկ գու չե՞ս ճանաչել Աեդոյի լայել:

—Ուստայ Աշոտի աղջիկը Մարօն, պատասխանեց Գոհարը:

—Լաւ, ուստայ Աշոտը քեզ աղջիկ կ'տայ, հարցրեց Միսակը, —ախար ասում են Զաքոյներ ՅՈՒ մանեթ բաշւուղ են առաջարկել, էլե Աշոտը կամք չէ տվել մենք ո՞րտեղից կարողենք նրա դուռը գնալ աղջիկ ուզել:

—Կտայ, աղաշանք էլ կանի, հովեմնրա դլուխը. ինչի չի տայ. Սեդոյից լաւ աղի պէտք է տայ, փառք Աստուծոյ, իմ հօր տանը ի՞նչ է պակաս:

—Գոհար ջան, Աեդն քու աչքիդ մեծ բան կերեի, նրանց էլ մէկ հարցրու տես, մեզ բոլորիս մարդու անը կ'զնե՞ն, կը հաւնե՞ն, ասաց Միսակը զայրացած:

—Կհարցնեմ էլ, ինչո՞ւ չեմ հարցնի, հովեմնրանց գլուխը. նրանք խօ վերի արտի ցորենը չեն, թէ՞ նրանք երկնքից իջած են, ոտները ամպոտ է. այ հենց էս օր էլ թէ գու գուզես, կը գնամ Աշոտենց ասնը, մահանա սանդերկ կամեմ, կիմանամ նրանց միտքը:

—Դու գիտես, համա ես գիտեմ, որ ինչքան որ երկնքը գետնին մօա է, այնքան մենք կարող ենք Աշոտի հետ խնամի լինել. ոչ գնա, ոչ էլ սե երկս արի:

—Վզնամ, ինչ կայ, իս խանչալիս քարը վեր չի ընկնի. ի՞նչ կայ, ի՞նչ ամօթ բան է. ասում են. «Ուզողին մէկ երեսն է սե, չափողին-երկու»:

—Դու գիտես, համա թէ ինձ կ'հարցնես, ոչ գնայ, ոչ էլ թեթեացիր իպուր տեղը, ասաց Միսակը և գնաց դեպի գութան:

Գոհարը հասկացաւ որ իր յայտնած միտքը գուր չեկա. Միսակին և չգիտել թէ ինչպէս փարփի. ձեռքից թովնել Մարզին-այդ շատ ցաւ է, մանաւանդ որ պարզ տեսաւ Սեդրակի սիրահարութիւնը և լսեց խոստովանութիւնը. գնար ուզել - Միսակին անպատված կ'լիներ. չգիտել ի՞նչ անէր:

Սիրով քցըը յանձն առաւ. 'ի սէր իր եզրօր գնալ Աշոտենց տուն քանի կամուխ էր. Աշոտը սիրով ընդունեց Գոհարի ինդիրը ու ասաց:

—Գոհար բաճի, գու գիտես որ մեր Մարզի մուշտարին շատ շատ է. համա ես, պալովն ասած, Սեդոյին հաւանել եմ. Աստուծ շնորհըն աւելացնէ, բայց պէտք է հարցնեմ մօրը Աստարին, ամենից շատ իրան Մարզին. նա պէտք է այդ լծի տակ մտնի, նա պէտք է այդ գժվար լուծը քաշէ, թէ Մարօն ու Կատարը համաձայնին, ես իմ կողմից ոչինչ չունիմ ասելու:

Գոհարը գուրս եկաւ Աշոտենց տնից առանց դրական պատասխանի:

Լսելով, որ Գոհարը զնացել է Աշոտենց տուն և Աշոտը կամք ուներ Մարզին տալ Սեդրակին, Միսակը շատ տիւրեց: Մարօն, աշխարհի արեգակը, զեղեցիկ Մարօն պէտք է իր փորս եզրօր Սեդրակի կինը լինի. այդ միտքը տան ջում էլ Միսակին; Խաչու Սեդրակը իրանից վորը լինելով,

իր ստորագրեալը լինելով, կարողանար Մարօյի պէսին կին առնել. «անպատճառ այստեղ մի օյին կայ», մտածում էր Միսակը, «ինչո՞ւ Աշոտը շատերին խօսք չէր տայ և յանկարծ Գոհարին հաւանութեան նշան տվեց»:

— Ախար ես համոյ չէի այդ բանին, գոռում էր բարկութեամբ Միսակը, ինչո՞ւ դուք առանց ինձ հարցնելու գնացիք ուզելու:

Միսակը հին մարդկանց բռնակալ ուղղութեանը հետեղ մարդ էր: Նա այսպէս էր մտածում թէ փոքր եղայրը իր առաջը մշակի պէս է, թէ նա չունի իրաւունք իր անձի, իր գլխի վերայ մտածելու առանց իր բարձրագոյն հրամանին. «չ որ ես ասացի թողէք այդ մտագրութիւնը, ինչո՞ւ առանց իմ կամքին, առանց ինձ իմաց տալու գնացին ուզեցին»: Այդ և դրա նման դատարկ բաների վերայ Միսակը մտածում ու ինքն իրան կատաղում էր: Նա աւելի շարացաւ, երբ գիշելը իր կնոջեց լսեց, որ Սեղբակը սիրում է Մարօյին, Մարօն էլ փոխադարձաբար սիրում է Սեղբակին. լսեց թէ ինչպէս Գոհարը միջնորդութիւն է առ.ում և ով գիտէ էլ ինչ խօսեց, ինչ չխօսեց գիշելը կինը, բայց այդ օրից Միսակը ոլի էր պահում Սեղբակի վերայ:

Զ.

Սեղբակը Գոհարի միջնորդութեամբ կարողացաւ իր հօր եղբօր, Ստեփանի հաճութիւնը ստանալ ուստայ Աշոտի հետ ինամութիւն անելու; Ստեփան ամին նախ փորձեց հարցնել Միսակի կամքը, բայց անյաջող: Միսակ մի ասել, մի չար գետաս:

— Ամի, պատասխանեց Միսակը բարկութեամբ. — էդ ինչ

ցին է որ դուք իմ գլխի հետ խաղում էք. ախար ասած է աձին ես եմ, գարին դուք էք ուտում»: քու ի՞նչ գործն է իմ եղբօր նշանելու կամ չնշանելու մասին խօսել ի՞նչ գործ ունիս, ինչի ես մեր տան գործին խառնվում ես ով, ուստայ Աշոտը ով. հարիֆի միտքը 3—4 հարիւր մանէթ բաշլուղ առնելն է. չէ, ամի, չէ, այդ միտքը քեզանից հեռացրու, ասում են զաղղի խոզի հետ ընկեր չել լինի»:

— Միսօ ջան, ինչո՞ւ ես բարկանում, այսաել ի՞նչ գէշ բան կայ, Աստուծոյ դրած օրէնքի համաձայն գնում աղջիկ ենք ուղարկում: մեզ հարմացու է պէտք, Կուտանս կուտանս, չեն տայ-չեն տայ, զօռի բան խօ չէ. ի՞նչ կայ այս տեղ:

— Ամի, ախար մարդկանց աղջիկը անունով աղջիկ է. հարիֆների բերանը «չալկած» է. 3—4 հարիւր մանէթներից են սալրդ տալիս. մենք ինչ կարու ենք առնել:

— Լաւ, բանը փողի վերայ չէ:

— Հենց իսկ փողի վերայ է:

— Հապա ես որ առանց փողի պրացնեմ կամ 100 մաշնէթով գործը գլուխ բերեմ, ի՞նչ կասես:

— Էդ խօ հէքեաթ է:

— Հէքեաթ չէ, իսկ իսկութիւն է:

— Եհ որ այդ բան գէմ էք, դուք գիտէք: Ձեր արիւնը ձեր գլուխը, ես դաւի չունիմ և ոչ էլ կամք կուտամ Աշոտի հետ ինամութիւն անելու. ձեր գործն է, ինչու զիտէք այնպէս արէք. ասաց Միսակը վրդոված և դուրս եկաւ սենեակից: Ստեփանը մնաց շվարձ. ի՞նչ անէր, ո՞ր Չուլն ընկնէր. Սեղբակի խնդիրը կատարէր, Միսակին կ'կատաղեց նէր. Միսակի կամքով գնար, Սեղբակին կ'մաշէր. մնաց անել գլութեան մէջ:

Ստեփանը իր եղբօր որդիներից Սեղբակին աւելի շատ էր սիրում նրա անուշ բնաւորութեան, իսելացութեան և վարչողութեան համար. մանաւանդ Սեղբակի պատկերի և բնաւորութեան մէջ Ստեփանը տեսնում էր իր հանգուցեալ եղբօր Աղամի Ճիշտ տիպարը:

Վճռեց Սեղբակի սիրոյն համար գնալ ուստայ Աշոտի տունը ու Մարօյին ուղիք: Ու ստայ Աշոտը շատ սիրով ընդունեց Ստեփանին, նազ ու տուղ չարեց:

—Ստեփան ջան, Մարօն քուկդ է. ինչպէս զիտես, այնպէս կարդադրէ: Ստեփանը շնորհակալ եղաւ որ իր խնդիրը չմերժեցին, իրան «սե երես» չարին և որպէս «բէ՛հ» Ստեփանը տվեց ուստայ Աշոտին Սեղբակի հանգուցեալ մօր պարանոցի զարդը, որ բաղկանում էր 15 հատ «մահմուտիայ» ասած ոսկիներից, նաև մի սիրուն վերուղեայ մատանի: Սկսվեցաւ ընթրիքը: Սեղանի վերայ եկաւ նաև հարս եղած Մարօն: Նրա պատկերը քրող տակ աւելի սրանչելի, աւելի հրապուրիչ էր և նմանում էր ծովի յաւերժահարսի: Նա յուշիկ, ծանրաբայլ մօտեցաւ, համբուրեց իր նոր բարեկամ Ստեփանի ձեռքը, Ստեփանը տեսնելով Մարօյի սրանչելի պատկերը, շատ զգացվեցաւ ու ասաց.

—Ապրիս, զաւակս, տեսնեմ պատկդ. Սեղբակիս հետ միասին ծերաննաք, անուշ օրերով, բարի որդիներով: Մարօն կրկին անդամ համբուրեց Ստեփանի ձեռքը. այս նշան էր շնորհակալութեան: Ստեփանն էլ իր կողմից շնորհաւորեց Մարօյի նշանադրութիւնը և համբուրեց ճակատը: Ընթրիքը պարունակութիւնը և համբուրեց ճակատը: Ստեփանը շնորհակալութիւնը յայտնեց, համբուրեց Մարօյի ճակատը ու դուրս եկաւ:

Գալով եղբօր տունը յայտնեց, որ Աշոտը տվեց Մարօյին, յայտնեց նաև որ ինքը բէ՛հ տվեց և հարս արեց, յայտ-

նեց և այն թէ ինչպէս Աշոտը իրան պատվեց, իր մէկ խօսքը երկուս չերաւ, պատմեց վերջապէս Մարօյի սրանչելի տեսքը:

Հօր եղբօր ամեն մի խօսքը սրի պէս ցցվում էր Միսակի սրտում, նա սպասում էր թէ Աշոտը կ'մերժէ Ստեփանի խնդիրը, ինքը Ստեփանին մասխարայ կամի ասելով. «տեղն է քեզ անմիտ մարդ. ընկերու ճանաչէ, ոսներդ վերմակիդ համեմատ մեկնիր:» Բայց դէպքը ուրիշ փոխվեցաւ: Աշոտը, այդ հպարտ գոռող մարդը, առանց այլեալութեան տվեց իր աղջեկը-Մարօն Սեղբակին Ստեփանի և Գոհարի կամքը կառարմբեցաւ, ինքը սե երես եղաւ. ահա Սեղբակը կունենայ իշրան կին գեղեցիկ Մարօն: Թէև իր կինը Փեփրոնին էլ պակաս գեղեցիկ չէր, բայց համեմատելով Մարօյի հետ, ոչինչ էր. «ինչո՞ւ նա առանց իմ կամքը հարցնելու կատարեց այս գործը. ինչո՞ւ նա իմ փոքրը լինի ու այդ հրաշալի կինը ունենայ և միթէ Աշոտը առանց բաշխազի տվեց. միթէ Ստեփանը իշրան խափում է.» — այդ մտքերը և դրանց նմանները օձի պէս կրծում էին նրա նախանձու սիրար և նա օր առուր կը մտածեր թէ ինչպէս վերմինդիր լինի Սեղբակից:

Է՛

Անցել էր այդ օրից վեց ամիս: Բայեկենդանի ուրախ օրելից մէկն էր:

Նախիջևան գիւղի բնակիները հագած իրենց պահեատի հագուստները շաբախում էին գէպի Սեղբակենց առոնքը Սեղբակենց տունը այդ օրը հարսանիք էր, այդտեղ էին գիւղի նշանադր մարդիք, այդուել էին եկած բարեկամ, ազգական, ծանօթ, անծանօթ, հարս, աղջիկ, մեծ, փոքր բոլոր ուրախ,

զվարթ ուրախանում էին. եկած էին նաև երաժշտութիւնը. սաղց քամանչայ, փող, զուռնայ, դահուլ: Այստեղ էին գիւղի բոլոր ազապ տղայք, այստեղ էր նաև քաւոր Խաչօն, որ իր անպատճելի ուժեղութեան պատճառով գիւղացիներից ընդունել էր «Աժքահար» անունը: Աժքահար Խաչօն քաւոր էր և արժէր այդ հսկայական տիտղոսին: Նա հաղել էր իր պահեստի հագուստները, կախել էր իր արծաթապատ թուրը, որ շատ վայել էր իր հսկայական հասակին, զլիին դրել էր «խրիմի» ուե գտակը և մի առանձին բերկութեամբ ման էր գալիս, կարգադրութիւններ էր անում: «Ճամբայ տվէք քաւոր աղին» ասում էին գիւղացիք, երբ աժքահար Խաչօն ուրախ զվարթ անց ու գարձ էր անու:

Սեղրակի երկու քոյրերը — Գոհարն ու Անան — թեերը վեր քաշած ջերմեռանդութեամբ գաթայ էին թխում: Խօֆի մօլքուրը փաւի պատրաստութիւն էր տեսնում: Եւայ հօրքուրը հաւերն էր իստակում:

Նրա որդին Մելօն թեերը մինչեւ արմունկները վեր քշած քերթում էր պարարտ եղները, որ մորթել էին հարսանեաց համար: Ու դրակը ու իր հարս Փեփրոնէն գինի ու արալ էին պատրաստում, տկերից շեշերն էին լընում: մշակները ջուր ու փայտ էին բերում:

Սազանդարների խմբակետ աշըլ Ֆիօյին թափում էր իր բոլոր «մարիֆաթթը». Հայս, աղջեկ պարում էին, ազապ տղայք ծափ էին տալիս, մանուկները զմայլում էին նրանց վերայ: Հասակաւոր ծեր մարդիք նստած օջախի շուրջը խմում էին «աչ բալցափ» թասերը և ամեն անգամ օրհնում էին թագաւորի ու թագուհու կեանքը: Ժողովուրդը ուրախ էր, որ Սեղրակը հասաւ իր «մուրազին» և իր լայեղ հարսնացու գտաւ: Ժողովրդի այդ ուրախ միջոցին լսե-

լի եղաւ մի ձայն. «գալիս են, գալիս են:» Եւ իրօք՝ հեռվից լսելի եղաւ մի այլ երաժշտութեան ձայն: Բոլորի ուշըը գարձաւ դէպի այն կողմը: Մի գիւղացի հեծած իր սպիտակ ձին, բոնել էր մի ծածկված սինի. գիւղացու պարանոցը զարդարված էր կարմիր-կանաչ թաշկինակներով: Զին նոյնպէս պակաս չ'ը իր ախրոցից. ձիու զլուխը, ականջները, պարանոցը, սիրտը բուլուր զարդարված էր նախշուն թաշկինակներով: Զիաւորին շրջապատել էին մի խումբ բարեկամներ. ձիու առջեկից գնում էր երաժտութիւնը, իսկ յետեկից հետաքրքիր մանուկները: Ճանապարհ տվէք «մուրազ» բերովին, ձայն տվեց զուռնաձի նղօն:

— Բարով, հազար բարի, համեցէք, մեր գլխի, մեր աչքի վերայ, բարով եկաք: Զիաւորը դեռ ձիու վերայ էր:

— Զին մեզք է, բան բերէք, հրամայեց ուստայ նղօն:

— Ես բոպէիս, ձայն տվեցին միւս գիւղացիք և դուրս եկաւ բաւոր Խաչօն, ձեռքին բոնած արազի ու գինու շիշրը:

— Տօ Աւագ, ես բու աչքերին զուրազան, զու բարով ես եկել. Աւագ ջան, ձիուդ խմայնեմ թէ քեզ տամ:

— Հալա ինձ խմայրու, ջանս տաքացրու, հապա ձիուս, ասաց Աւագը:

— Համեցէք, համեցէք, ասաց Խաչօն, տալով բաժակները:

— Դէ՛հ, ողջ լինիք, աչքերդ լոյս, Աստուած Ա. պսակին արժանացնէ, միասին ծերանան, մի բարձի մնան, բարեկազդ լինին:

— Սալ ընիս, Աւագ ջան, ձայն տվին գիւղացիք և ակսեցին բաժակ բաժակի ետեկից խմել օրհնելով թագաւորի ու

թագուհոյ անուշ կեանքը:

— Աւագ ջան, այս էլ ձիուդ կ'իմացնես, ասաց բաւոր Խաչօն, տալով կապոյտ թղթադրամը:

— Են մնաս, բաւոր ալա ջան, շնչ մնաս, ես քու ոտքերիդ զուրպան, ես քու ուժիդ ու բաջութեանդ զուրպան, դու ինձ ամօթով արիր, ասաց Աւագը, ընդունելով ընծան:

Թողովրդականք բայց արին Աւագի բերած սինին, սինու վերայ գարսված էր արմաւ, արմաւի վերայ կար չորս զոյդ Ճերմակ գուլբայ, մի մետաքսեայ թաշկինակ, մի բարձ «Հինայ». այս բոլոր ժողովրդական լեզվով «թագաւորի վարտիկ-շապիկն էր»: Գիւղական ժողովրդական սովորութեան համեմատ այդ սինին պէտք է խաղացնէին (պար գային) թագաւորի ամենամօտ ազգական կանայք: Ամենից առաջ եկաւ Սեղրակի հօրբուր Լուսիկ խաթունը: Լուսիկ խաթունը չ'նայելով իր 70 տարեկան հասակին, նոր հայրի պէս պար խաղաց սինին գլխի վերայ բռնած. նրանից յետոյ միւս հօրբուրները, մօքբուրները, քոյրերը և վերջը իր եղօր կին Փեփլունէն. բոլոր կարգով և վայելուչ խաղացին: Պարը տեեց մի ժամ: Երբ շապիկ խաղացնելը վերջացաւ, ժողովուրդը միաձայն բղաւեցին. «Խստուած չնորհաւոր անե, միասին ծերանան, բարեբաղդ լինին, տարոսը ազապներին:»

— Երեկոյեան սապրիչ Յակօն, որ յայտնի էր «դալլակ Յակօ» անունով, մաքրեց Սեղրակի առանց իրան ածիլելուն էլ մաքուր ելեսը: Երբ սապրիչը աւարտեց իր գործը, աղապ տղայք Սեղրակին տարան լողացրին մաքուր ջրով, հագուցին նոր բերած շապիկ-վարտիկը և դուրս բերին դէպի ժողովուրդը: Սինեակում նստած էին բոլոր գիւղացիք, այսուղ էր նաև Տէր-Թաթոսը: Քահանան օրհնեց Սեղրակի «թա-

գաւորական» հանդերձները և ստացաւ իր հասոյթը: Երբ հանդերձ օրհնելու ծէսը վերջացաւ, աշըզ Ֆիօյին ասաց:

— Տէրտէր ջան, դու պրծար, հերթը իմս է: Սկսեց մի առմի գովիկ «թագաւորի» ամեն մի հագուստը: Գովում էր նաև այդ աւուր ուրախութեան հերոս Սեղրակին, և իրաւ էլ գովասանքի արժանի էր Սեղրակը: Բնական սիրուն պատկերի տէր լինելով, այդ օրը իր նոր հագուստի մէջ աւելի գեղեցիկ, աւելի հրապուրիչ տէսք էր ստացել: Արդու գրուզ մազերով, լայն ճակատով, կանոնաւոր սև ուսուերդ, անձառաչը երբով կարմիր լիք երեսով, լայն կուրծքով, ամեւր վանդիվածքով մի հերոս տրամադր էր ներկայացնուած տեսնող ազտապ աղջեկները չեն կարող նախանձել Արօնի բանդին:

Երբ հագուստի դովասաննութեանը գունդացաւ, ազապ տղայքը Սեղրակի ձեռքը ու ոտքը «հինայ դաւին..» *) այդ գործողութիւնը աւելի ծիծաղելի անցաւ:

Այդ գիշեր միւչեւ ժամը և-ը գիւղացիք կերան, խմեցին, սպարեցին, խաղացին, յօգնեցան և բնելու պարկեցան, որ առաւոտեան բարի լուսի հետ գնան «հարսնառ»: Դինին և արագը թմրեցիել էր նրանց ուղեղը, որով շատ շուտ քնեցին:

Մէկ մարդ, որ սրտով ուրախ չէր, որ Սեղրակին նայելիս կարծես աչքը փուշ էր խրում-դա էր Միսակը: Նա առերես իրան ուրախ էր ձեացնում, կերաւ ու խմեց, բայց իր կերածն ու խմածը աւելի կատաղեցուցին, աւելի բոլորքեցրին իր գիւղական նախանձը: Նա վերկացաւ իր տեղից, զնաց մի ուրիշ սենակ մի սատանայական նպատակի, մի գժոխային գործողութիւն կատարելու նպատակով. . .

*) Հինայ դնելու սովորութեւնը մինչեւ աշժմ էլ գործածվում է գիւղական ժողովրդի մէջ. դա մի տեսակ կարմը ագոյն ներկ է, ու բերում են Պարոկաստանից:

Բ.

Միսակը եկաւ մտաւ այն սենեակը, որտեղ կանայք էին. տեսաւ նրանք գեռ արթուն խօսում էին. գնաց միւսը. տեսաւ այդտեղ էր իր հորեղբայր Ստեփանը և մի քանի հասակաւոր մարդկանց հետ նատած չիրուխ էր ծխում. անցաւ երրորդը, այստեղ պարկած էին երեք հոգի. Սեղբակը, բաւոր Խաչնի և իւր հօրաբրոջ որդի Լեռնը: Երեքն էլ քնած էին անմռշ քնով... Միսակի գէմբը փայլեցաւ դիւական հրճվաներով. նա իր գործողութեան ձեռնայկութիւնը մասսամբ կատարված յաջողված համարեց: Գուրս եկաւ, անցաւ սենեակները, մտաւ մի այլ սենեակ որտեղ ոչ չկար, պատից վեր տոտումի դիւական գործիք, դրեց փէշի տակը, կրկին անցաւ իր անցկացած սենեակներից, հասաւ Սեղբակի քնած սենեակը: Ոչ ոք մթութեան մէջ բան չկարուցաւ նկատել. Մտնելով Սեղբակի սենեակը կրկին ուշադրութեամբ նայեց, տեսաւ երեքն էլ քնած էին: Աւագութեամբ մերկացեց պահած առարկան: Ճագափ րյասի առջե փայլեց խէնչալը, որ ականմժօթափելի մվեց Սեղբակի սիրտը. . .

— Վախ, մայրիկ ջան, զոռաց Սեղբակ:

Դնա՞ մայրիկիդ ծոցը, խօսեց գաղանը կրկին ներս խրելով խէնչալը. — զնա մարդադդ լաւ առար. . .

— Ան, Միսակ, այդ գու ես, ես ի՞նչ չար գործել եմ բու գէմ: . . .

Էլ չխօսեց չարագործը. այդ նոր Կայինը դուրս եկաւ շտապով: Եղբօր արխանը մի կողմից, վախը միւս կողմից սպղտորեցին նրա խանգարած ուղեղը և նա դիւահարի պէս սկսեց փախչել: Այդ դրութեան մէջ նա պատահեցաւ իր հօրեղբօր Ստեփանին:

— Միսօ ջան, այդ ուր ես վազում. տղայ, քեզ ի՞նչ է պատահել հարցրեց Ստեփանը կաբեկցութեամբ:

— Ոչինչ ամի ջան:

— Չէ, աղայ, քեզ մի բան է եղել այդ ինչու ձեռքերդ գողում են:

— Ոչինչ, ամի ջան:

— Տղայ, ոչինչը որն է, քա երեսդ մեռելի գոյն է դառել ձերմակ թան է կտէհել ասա՛, ՚ի սէր Աստուծոյ, ի՞նչ է պատահել:

— Ամի ջան, Սեղօն մեռաւ, ախ Սեղօ ջան, ասաց ու դուրս պլծաւ Ստեփանի ձեռքից, սկսեց փախչել, փախչել առանց յետ նայելու. . .

Ստեփանը լարվ փազեց գէպի Սեղբակի սենեակը, տեսաւ նրա ձայնից Խաչօն ու Լեռնը զարթել էին:

— Սեղօ ջան, Աստուծոյ խաթեր, ի՞նչ է պատահել.

— Ան, ամի ջան, Միսակը. . . .

— Սեղօ ջան, ՚ի սէր Աստուծոյ, քեզ ո՞վ զարկեց:

— Միսակի խանչալը սրտիս մէջն է:

— Սեղօ ջան, քու աչքերուդ մատաւ, քեզ էր դրութեամբ հացրեց:

— Մ. . . ի. . . ս. . . ա. . . կ. . . ը. . .

Հազիւ կարողացաւ արտասանել դժբաղդ զոհը ու աւանդեց:

Հարվածը շատ խոր էր. սիրար և թոքը կարատիւ էր:

Այդ սոսկալի բօթը կայծակի արագութեամբ աշրածվեցաւ ամբողջ գիւղի մէջ: Հարսանիքը փոխվեցաւ մեռելատան, ուրախութիւնը — սգի... Գոռ ում գոչումը ընկաւ Սեղբակինց տան մէջ: Գոհարն ու Անան իրանց ողբալի ձայնով աշխարհք էին քանդում: բոլոր կանայք, հարմներ ու

աղջկներ սկսեցին ձայնակցել Գոհարին ու Աննային. Տունը լցվեցաւ լացով: Արտասուրը հեղեղի պէս թափում էր թշգառների աչքերից: Տղամարդկանցից ոմանք վազեցին բոնել այդ նոր Կայէնին, այդ եղայրասպան չարագործին: Դիւղի տանուտէր Պետրոսքէհան խելով եղելութիւնը, իսկոյն զեկուցում գրեց ու իր զաւաղի հետ զրկեց Կաղզվան. զաւաղի հետ մի քանի գիւղացիք գնացին իշխանութեան մարդկանց կանչելու: Մի քանի ժամկց յետոյ Կաղզվանից եկան դաւառապետի օգնականը իր պրիստաւնելով և կօղակներով: Եկաւ նաև բժիշկը իր ֆելդշերով:

Յարգելի բժիշկը տեսնելով Սեղրակի արխենոս գիակը, տեսնելով նրա դէմքը, բարկացաւ ասելով «Տօ աննաստուածներ, տօ անխիղ՛ գազաններ, սրան ո՞վ է խիել, տօ ձեր ձեռը կոտրվի, ձեր խիղճը մեռնի, սրա պէս աղամարգին էր ձեռ կ'տան: Տօ անհոգի գազաններ, ինչպէս զմբշեցիք այս ազնիւի կեանքը կտրել:»

Ֆելդշերը գուրս բերեց Սեղրակի գիակը, գանակով պատուեց այն շապիկը, որ երեկ երեկոյիան հազցրել էին .. Ճեղքեց սիտը: Գոհարն ու Աննան ուշաթափվեցան, երբ իրանց սէրելի եղբօր մարմինը կտրատվում էր անգութ Փելդշերի գանակի տակ .. Պ. բժիշկը այլևս չկարողացաւ համբերել, լացին և ամենքը: Այդ տիսուր տեսարանի առաջ քարերն էլ կուլային ..

Պրիստաւը կազմեց պրոտօկօլ, դրեց բժիշկի ասածները, կատարեց իրան պարտը և հեռացաւ: Հեռացաւ նաև Պ. բժիշկը անհծելով, նղոփելով գիւղացիների տղիսութիւնը, տիսմարութիւնը և յիմարութիւնը:

Բժիշկն ու պրիստաւը կատարեցին իրանց բերը. հերթը եկաւ Տէր-Թաթոսին, սա էլ կատարեց թաղման կարգը ...

Պսակի փոխարէն դիակը գուրս բերին. Մարօյի փոխարէն հուղի հետ պսակեցին. . .

Տիսուր էր ամբողջ գիւղը: Մեծ, փոքր, հարուստ աշխատ մանակցում էին Սեղրակի յուղարկաւորութեանը: Նրան թաղեցին իր հօր ու մօր մօտ: Նրե թալումը վերջացաւ, գիւղացիք եկան տուն: Հարսանեաց համար պատրաստած գաթաները, մին ու վլաֆիլ «հողու հացի» տեղ կերան, գինին ու արաղը խմեցին, լիացան, օրհնեցին Սեղրակի բարի յիշատակը, նրա հոգւոյն հանդիսան յաւիտենական մախթեցին ու հեռացան:

Թա.

Այս բոլոր թշգառութիւնների պատճառը, եղայրասպան Միսակը, օգտվելով գիշեային խաւարից կարողացաւ փախչել մինչև Խար գիւղը. այդ տեղ նա թագնվեցաւ գիւղի մի մարադի խոտերի ու գարմանների մէջ: Նրան որոնող ոստիկանները ու գիւղացիք գտան խոտերի մէջ թագնացած: Ձեռք ու ոտքը ժուկով կապած տարան Կաղզվանը բնիչի մօտ: Միսակը խոստովանեցաւ, որ ինքը խէնչալով սպանեց իր հարազատ եղբօր Սեղրակին:

— Ինչո՞ւ էիր սպանում եղբօրդ, հարցրեց բնիչը, — նա ի՞նչ յանձանը ուներ քու գէմ:

— Ոչինչ, Պ. քննիչ, ևս սիրահարված էի նրա նշանածի Մարօյի վերայ:

— Դու ամումնացած ես:

— Այո, ես ու զում էի իմ կնոջն էլ սպանել որպէս զի Մարօյին կարողանայի առներ: Զարադործի այդ պարզ խօստովանութիւնը ոչ թէ նրա անկեղծ սրտից էր, այլ խելագարութիւնից և իլօք նա խելագարված էր: Դատաստանը նրան դա-

տապարտեց «յաւիտենական աքսոր, տաժանակիր աշխատանքի»։ Ծէկ պատիժը թէթէ չէր, բայց թշվառ չարագործի սիրտը չէր հանգստանում։ Նա չունէր խաղաղութիւն, չունէր գաղտար։ Խղճի խալթը նրան տանջում էր, հանգիստ չէր տալիս։ Նա Սիրիլի ճանապարհին ինքն իրան ձգեց գետը և խեղդվեցաւ։ Նրա դիակն էլ արժանի չեղաւ հողե, օրհն նեալ գերեզմանի . . .

1891 թ. Յուլիս ամսին ես գնացել էի Խնձկոնից մենաստանը այնաեղի ջերմուկներում լրզանալու համար։ Եթի գեղեցիկ պարզ գիշէր էր։ Լուսինը լուսաւորում էր մենաստանի սիրուն շրջագայքը։ Վանքի գուան առաջ ընկերներս պար էին խաղում։ Աս եափունձին վերաս առաջ նստել էի ուռենումօտ։ Ինձ մօտ նստել էր Ն. գիւղի բնակիչ Ո. Պ. և պատմում էր գիւղական կեանկըց դէպքեր։ յանկութ դահուր ու զուռնայի ձայն լսեցինք։

— Եյդ գիտե՞ս ինչ ձայն է, հարցրեց նա ինձ։

— Ո՛չ, պատասխանեցի։

— Եղ Մարօյի հարսանիքն է։ Եւ նա պատմեց որ Սեդրակի ողբակի մահից յետոյ Մարօն ուխտեց այլ ևս չ'ամուսնանալ։ Երկու տարի նա մնաց սև քողով։ Հօր թախանձոնը մէկ կողմից, ժողովրդի բամբասանքը միւս կողմից, թոյլ չ'տվին Մարօյին մնալ իր ուխտի վերայ։ Նա նշանվեցաւ Կ. գիւղի բնակիչ Մ. Յ. ի հետ և 1891 թ. Յուլիսի 17-ին կատարվեցաւ Մարօյի հարսանիքը։

Թէկ Մարօյի այժմեան ամուսինը Սեդրակից պակաս տղայ չէ, բայց Մարօն գեռ չէ մոռացել Սեդրակի, այդ աղնիւ երիտասարդի, բարի իշատակը։ Նա ամեն անդամ՝ հարանց գալիս, գնումէ Սեդրակի գերեզմանի վերայ, լաց է լինում, աղօթումէ, օրհնել է տալիս, ասելով «Սեդրակ, դու իմ պատճառով սպանվեցար, բայց այդ դէպքում ես մեղաւոր չէի։ Բո անուշ սէրը և բարի յիշատակը ես չեմ կարող մոռանալ յաւիտեան»։

ՊԱՏՐԱՍ ԵՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.


1. ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ, նկարագիր Շիրակի, Ապարանի, Եջմիածնի և Երևանայ։
2. ՄՇԱԿ, վէպիկ թիւրքահայոց կեանքից։
3. ԱՇՈՅ ԵՐԿԱԹ, պատմական վէպ։
4. ՎԱՐԴ-ԱՆՈՒԾ, պատկեր։
5. ՄՇՈՅ Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ.
6. ԿԱՐԻՆ ՔՈՂԱՔ, նկարագրութիւն։
7. ԵՐԿՈՒ ԵՊԲՈՅՐ, պատկեր իրական կեանքից։
8. ՈՍԿԻ ԺԱՄԱՅՆՅՈՅՅ, պատկեր։

„ՇԻՐԱԿ“ ԳՐԱՎԱԶԱԼՈՒՄՑԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԵՐԸ

ՀԱՅ ԱՇՈԽՂՆԵՐ. աշխ. Գ. Զ. Լեռնեանցի. 30 կ.
ԱՇՋԱ. Ա.Ա.ԲԻԲԻ ՀԵՔԵՍԹԸ. աշխ. Աշոգ-Զիւանու . . . 40 կ.

Նոյն Գրավազալում այսպէս վաճառվում է:

ՔՈՐՈՇԻ և Ա.Ա.ԲԻԲԻ ՀԵՔԵՍԹԸ. աշխ. Աշոգ-Զիւանու . . . 60 կ.
ՊԱՏԱԿԵՐՆԵՐ ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ. աշխ. Շիրակեցի. . . 5 կ.
ՄՈ.ԲՈ., պատկեր իրական կեանքից. աշխ. Շիրակեցի. . . 5 կ.



Վառմարով առնողներին զիջում կը լինի:

Շախվում է.

ԹԻՖԼԻՍ «ԿԵՆԱՉՐՈՒՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱռ անոցում»

Ա.Ա.ՔՍԱՆԴՐԱԳՈՅ, «Շիրակ» գրավաճառ անոցում, որի
հասցեն է. Александровская, „ШИРАКЪ“ К. С. Саноянца.

ՀՀ Ազգային գրադարան



N1 0342323

